

021103.00.6 Կինոարվեստ

021103.01.6 Կինոարվեստ (խաղարկային ֆիլմի ռեժիսուրա, վավերագրական ֆիլմի ռեժիսուրա, հեռուստառեժիսուրա) մասնագիտության գծով բակալավրի կրթական ծրագրով ԵԹԿՊԻ-ի դիմորդը հանձնում է չորս քննություն.

1. Դերասանի վարպետություն
2. Ռեժիսուրա (գործնական)
3. Հարցազրույց
4. Հայոց լեզու, գրականություն (ոչ մրցութային)

Դիմորդը պետք է ներկայացնի սցենար կամ գրական ժանրի որևէ աշխատանք՝ դրվագների մանրամասն և տեսանելի շարադրամաբ (մինչև 3 էջ՝ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12) և նույն գրական աշխատանքի կամ սցենարի հետ թեմատիկորեն կապված լուսանկարների շարք (ալբոմի տեսքով՝ 10-20 լուսանկար, չափը՝ 15x20) կամ տեսաֆիլմ (3-8 րոպե, DVD):

Հնչյունային ռեժիսուրա մասնագիտացմամբ դիմորդների համար երաժշտական կրթությունը ցանկալի է:

Դերասանի վարպետություն քննության բաղկացուցիչները, դրանց պահանջները և գնահատման չափանիշները.

(պետք է ներկայանալ մասիկներով, տրիկոներով)

- ✓ դերասանական համր էտյուդ (նախապես պատրաստած, տևողությունը մինչև 3 րոպե)՝ ստեղծագործական մտահղացում, իրականացում՝ 0-10 միավոր,
- ✓ ռիթմիկա և երաժշտական լսողություն՝ 0-10 միավոր:

Ռեժիսուրա քննության բաղկացուցիչները, դրանց պահանջները և գնահատման չափանիշները.

- ✓ ներկայացված գրական աշխատանքի կամ սցենարի (թեմայի ընտրություն, մտահղացում, մեկնաբանություն) և դրանց հետ թեմատիկորեն կապված լուսանկարների կամ տեսաֆիլմի քննարկում՝ 0-10 միավոր,
- ✓ խաղարկային ֆիլմի ռեժիսուրայի, վավերագրական ֆիլմի ռեժիսուրայի և հեռուստառեժիսուրայի գծով՝ առաջադրված թեմայով կադրի կերպարային լուծում (նախապատրաստման ժամանակը՝ 15 րոպե)՝ 0-10 միավոր,
 - ✓ հնչյունային ռեժիսուրայի գծով՝ առաջադրված երաժշտության հիման վրա տեսանելի պատկերաշարի կառուցում (նախապատրաստման ժամանակը՝ 15 րոպե)՝ 0-10 միավոր,

Հարցազրույց քննության պահանջները և գնահատման չափանիշները.

- ✓ հարց կինոարվեստի պատմությունից՝ 0-10 միավոր,
- ✓ ֆիլմի վերլուծություն՝ 0-10 միավոր:

Քննությունն ընթանում է նախապես հայտարարված թեմաների շրջանակում՝ հարցատոմսերով:

«Հայոց լեզու, գրականություն» առարկայի քննության գնահատականը մրցութային միավոր չէ:

021103.01.6 Կինոարվեստ

(Խաղարկային ֆիլմի ռեժիսուրա, հեռուստառեժիսուրա, անիմացիոն ֆիլմի ռեժիսուրա)
մասնագիտության 2018թ. ընդունելության ծրագիր

Ֆիլմեր

- | | |
|--|--|
| ⊕ Հ.Բեկնազարյան «Նամուս», «Պեպո» | ⊕ Ռ.Բալայան «Թոփչքներ երազում և արթմնի» |
| ⊕ Յու.Երզնկյան, Լ.Վաղարշյան «Առաջին սիրո երգը» | ⊕ Ֆ. Ֆելինի «Ամարկորդ» |
| ⊕ Ֆ.Դովլաթյան «Բարև, ես եմ» | ⊕ Ս. Էյզենշտեյն «Պոստյոմկին»
գրահանավը» |
| ⊕ Հ.Սայյան «Եռանկյունի» | ⊕ Չ.Չապլին «Մեծ քաղաքի լույսերը»,
«Փոքրիկը» |
| ⊕ Ա.Փելեշյան «Մենք», «Տարվա եղանակներ» | ⊕ Մ.Կալատոզով «Թոչում են կռունկները» |
| ⊕ Ս.Փարաջանով «Նռան գույնը» | ⊕ Է. Կուստուրիցա «Կյանքը ինչպես դրախտ» |
| ⊕ Ա.Մկրտչյան «Մեր մանկության տանգոն» | ⊕ Ա.Տարկովսկի «Անդրեյ Ռուբլով» |
| ⊕ Ս.Բաբայան «Մի նայիր հայելուն» | ⊕ Ս.Սոլովյով «Աննա Կարենինա» |
| ⊕ Հ.Խաչատրյան «Սպիտակ քաղաք» | ⊕ Ս.Ջվյագինցև «Վերադարձ» |
| ⊕ Վ.Չալդրանյան «Ապրիլ» | |

Կինոյի պատմության և տեսության թեմաներ

- ✓ Կինոյի ստեղծումը, հայկական կինոյի ստեղծումը
- ✓ Հայ գրականությունը կինոյում
- ✓ Հայ կոմպոզիտորները կինոյում
- ✓ Դերասանը կինոյում
- ✓ Կինոէկրանավորումներ. Վ. Շեքսպիր, Լ. Տոլստոյ, Ա. Չեխով, Գ. Սունդուկյան
- ✓ Խաղարկային ֆիլմի և ոչ խաղարկային ֆիլմի առանձնահատկությունները
- ✓ Հեռուստատեսության առանձնահատկությունները
- ✓ Կինոպերատորական արվեստ (հայ և համաշխարհային կինովարպետներ)
- ✓ Ժամանակակից հայ կինո

Գեղարվեստական գրականություն

- 📖 Վ. Շեքսպիր «Ռոմեո և Ջուլիետ», «Համլետ»
- 📖 Ժ.Բ. Մոլիեր «Դոն Ժուան»
- 📖 Լ. Տոլստոյ «Աննա Կարենինա»
- 📖 Ա. Չեխով «Բալենու այգի»
- 📖 Գ. Սունդուկյան «Պեպո», «Խաթաբալա»
- 📖 Հ. Պարոնյան «Պաղտասար աղբար»
- 📖 Ալ. Շիրվանզադե «Պատվի համար»
- 📖 Դ. Դեմիրճյան «Քաջ Նազար»
- 📖 Վ. Սարոյան «Իմ սիրտը լեռներում է»
- 📖 Հ. Մաթևոսյան «Ծառերը», «Օգոստոս»
- 📖 Հ. Թումանյան «Կիկոսի մահը», «Ոսկու կարասը», «Թմկաբերդի առումը»

Առաջարկվող գրականության ցանկ

- ✓ «Հանդիպումներ 10-րդ մուսայի հետ», Եր., 1985:
- ✓ Գալստյան Ս. «Հայացք մեր կինոյին . պատմությունը և ներկան» 2014
- ✓ Միտտա Ա. «Կինոն դժոխքի և դրախտի միջև», Եր., 2010:
- ✓ Քալանթար Շ. «Համո Բեկնազարյան», Եր., 1979:
- ✓ Ֆելինի Ֆ. «Կինոարարում», Եր., 1988:
- ✓ Асмикян С. "Тесный кадр", Ер., 1992.
- ✓ Бекназаров А. "Записки актера и кинорежиссера", М., Искусство, 1965.
- ✓ Закоян Г. "Армянское немое кино", Ер., 1976.
- ✓ Пелешян А. "Мое кино", Ер., 1998.
- ✓ Садуль Жорж "История киноискусства", М., 1957.